

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2016թ. հունվարի 15-ից փետրվարի 14-ը ՀՀ ԱՎԾ-ում էին ԱՄՆ-ի «ICF International» կազմակերպության փորձագետներ Ալեյանդրո Լուիս Ռեյը և Միանմիան Յունը Հայաստանի Ժողովրդագրության և առողջապահության հարցերի հետազոտության (DHS) նպատակով,
- ✓ 2016թ. հունվարի 18-22-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Համաշխարհային բանկի փորձագետներ Մորից Մեյերը և Գրեգորի Կիսունկոն ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո ընդգրկված ընթացիկ գործունեության ներկայացման և դրա իրականացման համար վարչական կարգավորման նպատակով,
- ✓ 2016թ. հունվարի 19-22-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության փորձագետներ Ստին Բիլլֆելդթին և Մարիա Բոյեն «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աշխատանքի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2016թ. փետրվարի 1-4-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Իտալիայի վիճակագրական ծառայության (ISTAT) փորձագետներ Ստեֆանո Տերսինյին և Սիմոնա Ռամբերտին «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ջրի հաշիվներ» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2016թ. փետրվարի 2-5-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրության վարչության արտաքին և փոխադարձ վիճակագրության բաժնի պետ Վլադիսլավ Մոսկալենկոն Ապրանքների արտահանման և ներմուծման գների ինդեքսների և ֆիզական ծավալի ինդեքսների հաշվարկման մեթոդների փորձի փոխանակման և խորհրդատվության անցկացման նպատակով,

- ✓ 2016թ. փետրվարի 8-12-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Իտալիայի վիճակագրական ծառայության (ISTAT) փորձագետներ Մարիա Փիա Սորվիլլոն և Էնրիկո Տուչին «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ժողովրդագրական վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2016թ. փետրվարի 15-17-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Դանիայի վիճակագրության ներկայացուցիչ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ղեկավար Շարլոտ Յուլ Հանսենը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի կառավարող կոմիտեի երկրորդ նիստին մասնակցելու, ծրագրի բաղադրիչներին և նիստին առնչվող հարցերը քննարկելու նպատակով,
- ✓ 2016թ. փետրվարի 8-21-ը ՀՀ ԱՎԾ-ում էին ԱՄՆ-ի «ICF International» կազմակերպության փորձագետ Գյուլնարի Սեմյոնովը Հայաստանի ժողովրդագրության և առողջատահության հարցերի հետազոտության (DHS) վերաբերյալ խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2016թ. փետրվարի 22-26-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Ֆինլանդիայի վիճակագրական ծառայության փորձագետ Մերվի Նիեմին և Լիտվայի վիճակագրական ծառայության փորձագետ Գեդիմինաս Սամուոլիսը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ինովացիայի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով: